ԳՈՐԳԱԳՈՐԾ ԿԱՆԱՅՔ ՀԱՅՐԻՇԽԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋԵՎ

CARPET-WEAVING WOMEN BETWEEN TWO PATRIARCHAL SYSTEMS

КОВРОТКАЧИХИ МЕЖДУ ДВУМЯ ПАТРИАРХАЛЬНЫМИ СИСТЕМАМИ

Հասմիկ Պետրոսյան
Hasmik Petrosyan
Асмик Петросян

Հայաստանի պատմության թանգարան
History Museum of Armenia
Музей истории Армении

hasmik.petrosyan.@iae.am

Ներկայացվել է՝ 22.08.2025; գրախոսվել է՝ 29.03.2026; ընդունվել է՝ 14.04.2026
Received: 22.08.2025; Revised: 29.03.2026; Accepted: 14.04.2026
Представлено: 22.08.2025; рецензировано: 29.03.2026; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-266

Ամփոփում – Հոդվածում ուսումնասիրվում են Խորհրդային Հայաստանի գորգագործ կանանց աշխատանքային փորձառությունները՝ վերհանելով երկակի ենթակայության մեխանիզմները, որտեղ համադրվում էին ավանդական համայնքային նորմերը և խորհրդային պետության ինստիտուցիոնալ վերահսկողության գործիքակազմը: Գորգարտադրության պրակտիկաների քննությունը, հենվելով արխիվային աղբյուրների, պարբերական մամուլում հրապարակումների, 2023–2025 թթ. գրանցված ավելի քան հիսուն բանավոր պատմությունների և դաշտային հետազոտության տվյալների վրա՝ ցույց է տալիս, որ թեև խորհրդային պետության ձևավորած արդյունաբերացման գործընթացները ներկայացվում էին որպես կանանց «ազատագրման», այն է՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքում ներգրավման միջոց, գործնականում վերարտադրում էին սեռային հիերարխիաները՝ սահմանափակելով կանանց մասնագիտական առաջընթացի և սոցիալական ինքնավարության հնարավորությունները: Հետազոտությունը, հիմնվելով հայրիշխանության ֆեմինիստական տեսական մեկնաբանությունների վրա, բացահայտում է պետության և համայնքի փոխազդեցությամբ ձևավորվող վերահսկողության բազմաշերտ համակարգերը: Պետական գաղափարախոսությունը ոչ միայն պահպանեց համայնքային սեռային նորմերը, այլև նպատակային կերպով օգտագործեց գորգ գործելու մշակութային կապիտալը՝ կանանց աշխատանքը ծառայեցնելով տնտեսական արդյունավետության և գաղափարական վերահսկողության նպատակներին: Վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց աշխատանքի ինստիտուցիոնալացումը ուղեկցվել է

մասնագիտական սեգրեգացիայի և սոցիալական շարժունակության սահմանափակման գործընթացներով:

Abstract – This article examines the labor experiences of carpet-weaving women in late Soviet Armenia, highlighting the mechanisms of dual subjugation where traditional community norms intersected with the institutional instruments of state control. The study of carpet production practices – based on archival sources, publications in periodical press, over fifty oral histories recorded between 2023 and 2025 and data from field research shows that although the processes of industrialization promoted by the Soviet state were presented as opportunities for women's "emancipation" and participation in social, economic, and political life, in practice they reproduced gender hierarchies, limiting women's professional advancement and social autonomy. Drawing on feminist theoretical interpretations of patriarchy, the research reveals the multilayered systems of control formed through the interaction of state and community. The state ideology not only preserved community-based gender norms but also deliberately employed the cultural capital associated with carpet weaving to subject women's labor to the goals of economic efficiency and ideological regulation.

Аннотация – Анализ трудового опыта женщин Советской Армении, работавших в ковроткачестве, выявляет механизмы двойной зависимости, где сочетались традиционные общинные нормы и институциональные средства контроля советского государства. Изучение практик производства ковров, основанное на архивных материалах, публикациях в СМИ, свыше пятидесяти устных свидетельствах, зафиксированных в 2023–2025 годах, а также данных полевых исследований, демонстрирует, что, хотя процессы индустриализации в советском государстве воспринимались как «освобождение» женщин и их интеграция в социальную, экономическую и политическую жизнь, на деле они воспроизводят гендерную иерархию, ограничивая возможности женщин для карьерного роста и социальной независимости. Исследование, базированное на феминистских теоретических подходах к патриархату, выявляет многоуровневые механизмы контроля, возникающие во взаимодействии государства и общества. Государственная идеология не только поддерживала общинные гендерные нормы, но и намеренно использовала культурный капитал ковроделия, превращая женский труд в средство экономической эффективности и идеологического контроля. Анализ показывает, что институционализация женского труда была связана с явлениями профессиональной сегрегации и сужением социальной мобильности.

Հիմնաբառեր – ՀԽՍՀ, աշխատանք, պետություն, համայնք, ֆեմինիզմ:
Keywords – Armenian SSR, work, state, community, feminism.
Ключевые слова – Армянская ССР, труд, государство, община, феминизм.

Ներածություն

Կանանց ազատագրումը մարքսիստական տեսության մեջ դիտարկվում էր որպես սոցիալիստական հասարակարգի կառուցման բաղկացուցիչ տարր, լուծման կարիք չունեցող առանձին սոցիալական խնդիր: Պետական (խորհրդային) ֆեմինիզմի դեպքում կանանց «ազատագրումը» նախ և առաջ նշանակեց երկու բան՝ կանանց ներգրավում սոցիալիստական աշխատուժի մեջ, նրանց

արտադրողական կարողության ծառայեցում պետության նպատակներին և քաղաքական պայքար կնոջ վրա իշխանություն ունեցող բոլոր խոչընդոտների դեմ (Schuster 1971; Buckley 1981; Molyneux 1991; Lapidus 1993; Voronina 1993): Չնայած խորհրդային պետությունը «կնոջ հարցի» կարգավորման ուղղությամբ իրականացրած օրենսդրական բարեփոխումներով հաճախ ներկայացվում էր որպես առաջատար պետություն, սակայն առօրյա կյանքի կազմակերպման ու շփումների մակարդակում դեյուրե հավասարության ռեժիմի հաստատումը չէր ուղեկցվում դեֆակտո սոցիալական վերափոխումներով (Schuster 1971, 264; Schwartz 1979, 67–68, 77; Molyneux 1991, 100; Lapidus 1993, 138–141; Claro, Kramer 2015, 46): Կանայք շարունակում էին մնալ կառուցվածքային ու մշակութային սահմանափակումների շրջանակում. մասնավորապես՝ աշխատաշուկայում շարունակվում էին մասնագիտական խտրականությունը, հորիզոնական սեգրեգացիան և որոշումների կայացման գործընթացներին նրանց փոքր մասնակցությունը (Voronina 1993; Molyneux 1991): Ինչպես ցույց է տալիս Օլգա Վորոնինան, պետությունը ոչ միայն չվերաձևակերպեց ընտանեկան և համայնքային մակարդակներում գործող սեռային հիերարխիաները, այլև մակրոքաղաքական մակարդակում ինստիտուցիոնալացրեց կյանքի կազմակերպման հայրիշխանական վերահսկողությունը (Voronina 1993, 102, 109): Տղամարդկանց հետ հավասար աշխատելու, առողջապահական, կրթական, սոցիալական ծառայություններից օգտվելու կանանց իրավունքները ձևակերպվում էին ոչ թե որպես սեռային հավասարության հաստատման միջոց, այլ՝ որպես աշխատուժի արդյունավետ մոբիլիզացման մեխանիզմ՝ ուղղված սոցիալիստական արտադրության կարիքներին (Molyneux 1991, 90; Lapidus 1993):

Հոդվածը ներկայացնում է խորհրդային արդյունաբերական համակարգում կանանց աշխատանքի, սեռային հիերարխիաների և պետական վերահսկողության փոխհարաբերությունները՝ մասնավորապես կենտրոնանալով արտադրության մեկ ոլորտի՝ գորգարտադրության վրա: Այս բնագավառը յուրահատուկ է այն պատճառով, որ չնայած սոցիալիստական վերափոխման նպատակով պետականացված ոլորտ էր, աշխատանքի կազմակերպման և վերահսկողության ֆորմալ ձևերից բացի շարունակում էր կենսունակ մնալ նաև տնային միջավայրում արտադրության փորձը, ինչը փաստացի հակասում էր պետական (խորհրդային) ֆեմինիզմի գաղափարախոսությանը: Հոդվածի քննարկման առարկան գորգագործ կանանց փորձառություններն են սոցիալիստական պետության և ավանդական համայնքի սահմանած գենդերային նորմերի երկակի վերահսկողության պայմաններում:

Հետազոտությունը հիմնված է 2023–2025 թթ. Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռիի 11 բնակավայրերում գրառված ավելի քան հիսուն բանավոր պատմությունների, արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլում հրապարակումների և դաշտային նյութերի վերլուծության վրա: Տեսական հենքը կառուցված է Սիլվիա Վոլբիի (Walby 1990, 1997) «Հայրիշխանության տեսականացումը» աշխատության վրա, որտեղ նա ներկայացնում է հայրիշխանության

դրսևորման փոխկապակցված ոլորտներ՝ ներառյալ վճարովի և տնային աշխատանքը, պետական քաղաքականությունը, բռնությունը, սեռականությունը և մշակույթը: Հետևելով Սիլվիա Վոլբիի առաջարկած հայրիշխանական համակարգերին՝ հոդվածը կենտրոնանում է վարձատրվող աշխատանքում կանանց սեգրեգացիայի, տնային աշխատանքում, հատկապես սեզոնային տնտեսության պայմաններում սեռային դերաբաժանումների վերարտադրության և խորհրդային պետության կողմից կանանց աշխատանքի կազմակերպման քաղաքականության վրա:

«Գործում էինք պետության համար». աշխատանքի պետական վերահսկողության տրամաբանությունը

Հայկական ԽՍՀ-ում գորգագործությունը կանանց տիրապետած այն մշակութային կապիտալն էր, որը դեռևս 1920-ական թվականներից բոլշևիկյան իշխանությունների կողմից ընկալվում էր ոչ միայն որպես տնտեսական արժեք ունեցող գործունեություն, այլև՝ սոցիալիստական վերափոխման նպատակով օգտագործվող մշակութային ռեսուրս (Աբելյան 1924, 27–28; Թեմուրճյան 1955, 131–133): Կոլեկտիվացման և արտադրության կենտրոնացման գործընթացում, 1930-ականներից սկսած, այս հմտությանը տիրապետող կանայք ուղղորդվեցին դեպի պետական արտելներ, որտեղ նրանց մշակութային կապիտալը ներգրավվեց արտադրական պետականացված հարաբերությունների մեջ:

Մշակութային կապիտալի ինստիտուցիոնալացման հետ մեկտեղ պետության սեփականությունը դարձան նաև գորգագործության նյութական ռեսուրսները՝ աշխատանքային գործիքները, որոնք մինչ այդ գտնվում էին կանանց անձնական տնօրինության ներքո: Այդ գործիքները գորգագործ կանայք իրենց հետ տեղափոխում էին նոր արտադրական տարածքներ՝ իրացնելու հին հմտությունները, որոնք այլևս ենթարկվում էին պետական պահանջներին և չափորոշիչներին (Թեմուրճյան 1955, 135): Ուշխորհրդային շրջանում գործած գորգագործ կանանց բանավոր վկայություններում հաճախ հնչում է իրենց աշխատանքի պետական վերահսկողությունն ակնարկող արտահայտությունը. «գործում էինք պետության համար»:

Խորհրդային պլանային տնտեսական ծրագրի պայմաններում անհատական նախաձեռնությունների և եկամտի ձեռքբերման փոքր հնարավորությունները քաղաքացիներին դնում էր սահմանափակված տնտեսական ընտրության դաշտում, որտեղ լրացուցիչ եկամտի աղբյուր հայթայթելու՝ և՛ տղամարդկանց, և՛ կանանց հնարավորությունները ինստիտուցիոնալ ձևով սահմանափակված էին (Nash 1970, 40; Fitzpatrick 1999; Boettke 2017, 192): Նման պայմաններում, Հայկական ԽՍՀ-ի կոլեկտիվ տնտեսություններում աշխատող բազմաթիվ կանայք ձմեռային ամիսներին, իսկ որոշներն էլ նաև գյուղատնտեսական աշխատանքների ակտիվ սեզոնին, շահույթի որոնումներով ներգրավվում էին ձեռագործ գորգարտադրության ոլորտի մեջ (Ամեն մի գյուղացի իր ապրուստի համար 1924, 35–36; Թեմուրճյան 1955, 131–144; Սահակյան 1968, 3; Արամյան 1981, 5; Հակոբյան, Կոշկակարյան 1982, 11): 1982 թ. պաշտոնական հրապա-

րակումներից մեկում նշված է. «Գորգագործության մեջ ընդգրկված հարյուրավոր մարդիկ՝ գորգագործ-վարպետներ, ցրված 120 գյուղերում, գորգ են հյուսում իրենց տներում, այդ աշխատանքը հաջողությամբ համատեղելով գյուղատնտեսականի հետ» (Հակոբյան, Կոշկակարյան 1982, 11):

Այսուհանդերձ, պետական գորգարտելները կանանց պետական աշխատանքի միակ տարածքները չէին: Գորգագործությունը «զարմանալիորեն» շարունակեց զարգանալ նաև տնայնագործության ձևով: Կյանքի գրեթե բոլոր ոլորտների խիստ վերահսկողության ձգտումներ ունեցող պետությունը այս բնագավառի աշխատանքի կազմակերպման քաղաքականության մեջ ճկունություն դրսևորեց՝ սեզոնային ծանրաբեռնվածության անհավասար բաշխման պայմաններում արդյունավետ կերպով օգտագործելով կոլտնտեսական կանանց աշխատունակությունը. ձմեռային ամիսներին, երբ գյուղատնտեսական աշխատանքների ծավալը կտրուկ նվազում էր, կոլտնտեսական բանվորը գործնականում դուրս էր մնում արտադրական գործընթացից: Տնային պայմաններում կազմակերպված գորգագործությունն այս համատեքստում, թվում է, թե դառնում էր փոխհատուցող մեխանիզմ՝ ապահովելով կանանց մասնակի զբաղվածությունը՝ նվազեցնելով գյուղերում սեզոնային գործազրկության մակարդակը: Այս քաղաքականությունը դժվար է համարել կնոջ ազատագրման քաջալերանք, հակառակը՝ սա դարձավ տնտեսության շրջանառության մեջ կանանց աշխատուժն ինտեգրելու պետական անփոփոխ ռազմավարություն, ինչը տևեց մինչև խորհրդային պետության փլուզումը:

Պետական գաղափարախոսության շրջանակում օրինակելի «աշխատող մոր» կերպարը խորհրդային մամուլում մարմնավորվում էր գյուղատնտեսությունից արդյունաբերություն անցում կատարած կնոջ իդեալով կամ, ինչպես այս դեպքում է՝ աշխատանքային ոլորտների սեզոնային համադրմամբ: Գորգագործ կնոջը պատկերելու փորձերից մեկում, մասնավորապես «Հայաստանի աշխատավորուհի» պարբերականի էջերից մեկում (Հարությունյան 1967, 6), ներկայացվում էր Վայոց ձորի «արդյունաբերության առաջնեկում»՝ գորգագործական ֆաբրիկայում աշխատող «արևախանձ» բանվորուհի Թերեզա Մարգարյանի օրինակը՝ իբրև «հողագործի կենսագրություն» և «հողագործի ձեռքեր» ունեցող գորգագործի, որը շատերի պես «արևի համբույրն էր բերում գորգարտել»: Երկու դաշտերի անցումները գորգագործների մոտ պատճառ են դարձել լեզվաբանական տեղաշարժերի. գորգ գործելու արտադրական գործընթացների նկարագրություններում կանայք հաճախ օգտագործում էին երկրագործության դաշտին բնորոշ բառապաշար, օրինակ՝ հանգույց կապելու գործողությունը կանայք կոչում էին «հատ քաղել», գորգի շարքերի կառուցման գործընթացը՝ «ջերգեն [շարքը] ֆռռացնել» ևն:

Լուծելով կանանց տարեկան և սեզոնային զբաղվածության խնդիրը՝ գորգարտադրությունը խորհրդային տարիներին (Հայկական ԽՍՀ-ի պարագայում՝ դրան նախորդած և հաջորդած փուլերում ևս) շարունակում էր մնալ բացարձակ ֆեմինիզացված ոլորտ: Սա խորհրդային պետության՝ աշխատանքի տարան-

ջատման քաղաքականության դրսևորում էր (Nash 1970, 40–41; Schwartz 1979, 71–77; Buckley, 1981, 85-89; Voronina 1993, 99; Lapidus 1993, 41-42), որի շրջանակում աշխատանքի որոշ ոլորտներ, այդ թվում՝ թեթև արդյունաբերությունը վերագրվում էր կանանց աշխատուժին, ինչը սոցիալական առաջընթացի նույնպիսի հնարավորություն չէր տալիս կանանց՝ ի տարբերություն տղամարդկանց (հաշվի առնելով այս ոլորտի ցածր վարձատրությունը, թեթև արդյունաբերության մեջ աշխատանքային բուրգում ներգրավված կանանց ու տղամարդկանց դիրքավորումը, որտեղ տղամարդիկ այս ոլորտում նույնպես զբաղեցնում էին ղեկավար, ռեսուրսները կառավարող դիրքեր, մասնագիտական հմտություններ պահանջող պաշտոններ, իսկ կանայք, որպես կանոն, տեղավորվում էին բուրգի ստորին հատվածում՝ հաճախ տարիներ շարունակ մնալով նույն աշխատանքին) (Lapidus 1993; Nash 1970, 40–41): Սիլվիա Վոլբիի տեսության համաձայն՝ նման համակարգը պետության հայրիշխանական գործառույթների [այն է՝ աշխատանքի ոլորտների սահմանումը, դրանց գենդերային բաժանումը (գորգարտադրության դեպքում՝ ֆեմինիզացված կարգավիճակի պահպանումը), կանանց և տղամարդկանց համար առաջընթացի տարբեր պայմանները ևն] գործադրման արդյունք է: Նա տարբերակում է «բացառման» և «առանձնացման» մեխանիզմները. առաջինը՝ կանանց ամբողջությամբ որևէ աշխատանքային շուկայից դուրս մղելու, երկրորդը՝ նրանց ուղղորդելու ցածր վարձատրվող և ցածր կարգավիճակ ունեցող մասնագիտությունների դաշտ (Walby 1990, 53–55): Խորհրդային գորգարտադրության արտելային և տնայնագործական մոդելներով գործող համակարգը վերարտադրում էր կանանց՝ սոցիալապես ցածր արժևորված և ցածր վարձատրվող մասնագիտությունների դաշտ ուղղորդելու տրամաբանությունը:

Զբաղվածության կառավարումից և աշխատանքի ոլորտային բաժանումից բացի, պետությունը արտադրությունը կարգավորում էր նաև ինստիտուցիոնալ վերահսկողությամբ: Տնայնագործ կանանց նկատմամբ վերահսկողությունն իրականացվում էր հատուկ հաստիքների՝ «վարպետ-դաստիարակների» միջոցով, որոնք յուրաքանչյուր երկու շաբաթ պարբերականությամբ այցելում էին տնայնագործներին՝ վերահսկելու արտադրողականության նվազագույն ցուցանիշների, մասնավորապես օրական վեց հազար հանգույցի ապահովումը: Չնայած ձեռագործ գորգերի արտադրանքի ծավալների աճին և դրանց հաջող արտահանմանը Չիլիից մինչև Ճապոնիա, Նոր Զելանդիայից մինչև ԱՄՆ-ի շուկաներ (Թեմուրճյան 1955, 140–142; Ղուկասյան 1965, 8–9; Հակոբջանյան 1970, 25–27; Դարյան 1970, 8, 17–19; Գրիգորյան 1972, 20–21), արտադրության այս բնագավառը պահպանեց իր երկրորդական, ֆեմինիզացված կարգավիճակը՝ առանց կանանց աշխատանքի սոցիալական վերաիմաստավորման ջանքերի:

«Հարսը գորգ գործել գիտե՞». գորգագործ կնոջ վարձատրվող աշխատանքը՝ կոլտնտեսական ընտանիքում ազատագրման հակասական գործիք

Հայաստանի գյուղական որոշ բնակավայրերում կնոջ ինքնության հանրային ընկալումներում մինչ օրս էլ պահպանվում է ընտանիքի, տոհմի հետ

սերտ կապվածությունը. դիտարկված շրջաններում տեղացիները կանանց նկարագրելիս հաճախ նշում էին. -ի կինը, -ի հարսը, -ի մայրը, -ի հարևանը: Չնայած խորհրդային տարիներին կանանց բազմաշերտ զբաղվածությանն ու տնտեսական ներգրավվածությանը, այնուամենայնիվ, կնոջ սոցիալական դերը, հատկապես ընտանիքի ներքին հիերարխիայում շարունակում էր կառուցվել և պահպանվել ավանդական չափանիշների հիման վրա (Վարդումյան, Կարապետյան 1963, 70–72):

Կանանց բանավոր պատմություններից ակնհայտ երևում է, որ թեև կոլտնտեսական ընտանիքներում գորգագործության մեջ կնոջ ներգրավվածությունը նրան հնարավորություն էր տալիս հանդես գալ որպես եկամուտ ստեղծող կողմ, սակայն ընտանիքի ներքին հիերարխիայում և համայնքային սոցիալական ընկալումներում այս հմտությունը հիմնականում շարունակում էր դիտարկվել որպես կանանց հերթական պարտականություն՝ մասնագիտական աշխատանքի փոխարեն: Արտադրության այս ոլորտում վարձատրվող աշխատանքը չէր դառնում գենդերի վերափոխման գործոն, այլ վերածվում էր սոցիալական դերերի հաստատման ու վերահաստատման ինստիտուցիոնալ մեխանիզմի՝ համայնքի ձևակերպումներում պահպանելով կնոջ սահմանված դերի նորմատիվ հատկանիշները:

Գյուղերում, որտեղ սերնդեսերունդ գորգագործությունը կենսունակ արհեստ էր, օրինակ՝ Սյունիքի, Տավուշի, Լոռիի և Գեղարքունիքի որոշ համայնքներում (Լալայան 1903, 122–123; Թեմուրճյան 1955, 135; Լիսիցյան 1969, 158–159; Ավանեսյան 2021, 17–25; Պողոսյան, Պողոսյան 2021, 221–223) այս հմտությանը տիրապետելու պահանջը ձևակերպված էր որպես կնոջ սոցիալական դերի պարտադիր պայման: Գորգ գործելու արհեստին տիրապետելը դիտարկվում էր ոչ թե որպես կնոջ անհատական ընտրության արդյունք և հմտություն, այլ՝ կնոջ օբյեկտիվ դերի հերթական պարտավորություն՝ պայմանավորված համայնքի կողմից սահմանված դերային պահանջներով: 1956 թ. ծնված Տեղ գյուղի տղամարդկանցից մեկը գորգագործության հմտությունը համեմատում է հացաթխման կարողության հետ՝ երկուսն էլ ներկայացնելով որպես կնոջ պարտադիր կարողություն (գ. Տեղ, 11.10.2024 թ.):

Համայնքային ավանդույթների այս պատկերն օգտագործվում էր պետական քարոզչության մեջ, վերածվում սոցիալիստական արտադրողականության և կնոջ աշխատուժի մոբիլիզացման գործիքի: Օրինակ՝ Շահնազար գյուղում, որտեղ 1970-ականների դրությամբ արդյունաբերական լայնածավալ վերափոխումներ չէին իրականացվել, խորհրդային մեդիայում պաշտոնական խոսույթը կենտրոնանում էր արտադրության հիմնական հանգույցի՝ «Հայգորգ» միավորման՝ Շահնազարի գորգարտելի և դրա «օրինակելի» աշխատավոր գերդաստանների վրա, որոնց շարքում էին Գրեյանները, Սուքիասյանները, Այվազյանները, ինչպես նաև Դիլբարյանների տոհմից Եղսանը: Հրապարակման համաձայն, վերջինիս տատը և մայրը նույնպես գորգագործներ էին, իսկ 1970-ականներին նրա «աշխատանքային ընկերներ» էին դարձել նաև երկու դուստ-

ները՝ Սեդան և Նորան (Հակոբջանյան 1970, 25): Նույն աղբյուրում արտացոլված է նաև աշխատանքի սոցիալական վերահսկողության համայնքային նորմատիվացումը. երբ շահնազարցի տղամարդն ամուսնանում էր այլ համայնքի կնոջ հետ, «տղայի ծնողները հարցնում էին՝ հարսը գորգ գործել գիտե՞: Եթե ոչ, հաջորդ օրը տանում, նստեցնում էին տորքի առաջ և սովորեցնում» (Հակոբջանյան 1970, 25):

Այս կերպ, խորհրդային մեդիայում պաշտոնական խոսույթը աշխատավոր կնոջ կերպարը ներկայացնում էր միաժամանակ որպես տեղական ավանդույթների կրող և որպես խորհրդային արտադրողականության ու սոցիալիստական մշակույթի խորհրդանիշ: Գործնական քայլերը, պետական քարոզչությունը ոչ միայն ամրապնդում էին գորգագործության համայնքային պահանջները, այլև այն ներկայացնում որպես համամիութենական հետաքրքրության առարկա. պարբերականներում արձանագրվում են դեպքեր, երբ այլ հանրապետություններից կանայք դիմում էին խնդրանքով, որ գորգագործները հրապարակումների միջոցով իրենց էլ սովորեցնեն այս արհեստը (Գրիգորյան 1972, 20–21; Հակոբջանյան 1970, 25–27):

Մեկ այլ դեպքում՝ Իջևանի շրջանում, 1950-ական թվականներից ի վեր ձևավորված ոչ ֆորմալ գորգարտադրությունը՝ պետական վերահսկողության բացակայության պայմաններում, ամրապնդում էր կնոջ սոցիալական դերի պահանջները: Համայնքի մշակութային համակարգն այստեղ նույնպես գորգ գործելու հմտությունը ձևակերպել էր որպես կնոջ սոցիալական դերի պարտադիր պահանջ: Շրջանի գյուղական համայնքներում, գորգարտադրության գործընթացն ամբողջությամբ կազմակերպվում էր ընտանիքի և համայնքի անդամների համատեղ աշխատանքի և փոխօգնության սկզբունքով՝ թել մանելու, ներկելու, կծիկ պատրաստելու և գործելու պարտականությունները բաշխելով ընտանիքի ներսում: Տեղացիների բանավոր պատմությունները վկայում են, որ արդյունավետ աշխատանքի պարագայում երկու հոգով մեկ գորգը կանայք գործում էին միջինը տասնհինգ օրվա ընթացքում, ինչից հետո գորգագործներն իրենք պատրաստի գորգը կիրակի օրերին ավտոբուսով տեղափոխում էին հարևան Ադրբեջանական ԽՍՀ-ի Ղազախ քաղաք՝ տեղական շուկայում վաճառելու նպատակով: Գորգագործության այս փորձը՝ հիմնված շուկայի պահանջարկի, ձեռնտու փոխանակման և եկամտաբեր աշխատանքի վրա, առիթ դարձավ կանանց տիրապետած այս հմտության՝ տասնամյակներ շարունակ կենսունակությանը: Մասնավորապես, «Դեղնաքյունջ» գորգերի վաճառքի կայունությունը խթանում էր շարունակական արտադրությունը, որի յուրաքանչյուր օրինակից ստացվող 300–500 ռուբլին զգալի ներդրում էր կոլտնտեսական ընտանիքի բյուջեում (Մարության 2021, 75–80):

Այս պայմաններում գորգ գործելու հմտությունը դարձել էր կնոջ սոցիալական և ընտանեկան արժևորման հիմնարար չափանիշ, ինչը դաշտային աշխատանքների ժամանակ հնարավոր եղավ գրանցել ինչպես կոլեկտիվ, այնպես էլ անհատական հուշերում: Ուշագրավ է Հաղարծին գյուղից Խաշթառակ

գյուղ հարս գնացած կանանցից մեկի պատմությունը, որը տեղի սահմանված իրականությանը բախվելու մի օրինակ է: Նա մինչ ամուսնությունը չի տիրապետել գորգ գործելու հմտությանը, ինչն ամուսնու տանը բացասական արձագանքի է արժանացել: 1967 թ.՝ տասնվեցամյա աղջկա ամուսնությունից հետո նա տարեկից հարևանից սովորում է գորգ գործելու արհեստը, հմուտ գորգագործ դառնում, տասնյակ «դեղնաքյունջեր» գործում: Պատմում է, որ երբ նոր էր ամուսնացել, նախ սկեսուրը զարմանքով էր արձագանքել իր՝ գորգ գործելուն չտիրապետելու փաստին, ինչին հաջորդել են ընտանեկան տհաճ զրույցները, որոնցից մեկի ժամանակ սկեսուրն ասել է. «Դու՛ կնի՞կ ես, դու՛ կնի՞կ ես, որ մեր տուն ես էկել, մենք ոնց տենք ապրի» (գ. Խաշթառակ, 25.06.2024 թ.):

1990-ականներին արցախա-ադրբեջանական հակամարտության հետևանքով քչանում են սահմանային տարածք այցելությունները և պահանջարկի բացակայության հետևանքը լինում է «Դեղնաքյունջ» գործելու ավանդույթի դադարը (Մարության 2021, 75–80): Մինչ այդ հասանելի շուկայի հետ կապը, ուղիղ վաճառքի հնարավորությունը, գնորդների հետ բանակցելու նոր հմտությունների ձեռքբերումը և ընտանիքի եկամուտներում կանանց տնտեսական ներդրումները, միևնույն է, չէին վերափոխում համայնքի ներսում կանանց նկատմամբ արմատավորված դերային ընկալումները: Հակառակը՝ գորգագործ կնոջ աշխատանքի դիմաց ստացված վաստակը «տնօրինելու» ձևերը նույնպես շարունակում էր սահմանել ընտանիքը: Այս իրականության մասին էր նաև Տեղ գյուղի արհեստավոր-բանվորներից մեկի կենսափորձի նկարագրությունը. «Էն ժամանակ 120 մանեթը գիդում ես ի՞նչ փող էր: Ես էլ ուրխանում էի, տանում էի, դնում էի կիսուրիս ձեռին, որ ինձ ասեն լավ հարս ա. [ասեն] փողը պիրըմ ա, մեզ ա տալի՝ ինքնուրույն չի ծախսում: Իրանք մեր տան ծախսերը հոգում էին» (գ. Տեղ, 11.10.2024 թ.):

Համայնքի անդամներից մեկ ուրիշը, որը «Աշխատանքային հերոսի» մեդալով էր պարգևատրվել և հինգ տարի զբաղեցրել էր գյուղսովետի դեպուտատի պաշտոնը, հիշում է ընտանիքում մի դեպքի առիթով ապրած «անտեղի» ոգևորությունը, որը փաստում է տնտեսական ինքնուրույն որոշումներ կայացնելու՝ կնոջ սահմանափակ հնարավորությունները. «Երրորդ խոխաս որ ծնվավ՝ յորղան ենք կապալ, իրեք հատ վերմակ ա [սկեսուրը] կապալ, բայց երես, աստառ չունի, հենց մթելն ա: Էդ ժամանակ էլ՝ [արտելում] աշխատավարձ ստանում էին ամսվա վերջից վերջ: Կարում էինք գնանք ավանսի կարգով գումար ստանանք: Ա՛նո, դու՛ Անո, ամսվա կեսին գալիս եմ (Ա-ն ա մեր կասիրը), ասում եմ, – «Ինձ 60 մանեթ փող ես տալու», ասում ա. «Ա՛յ խոխա, կռիվ ա ըլնելու քու հետ»: Ես արդեն իրեք էրեխատեր՝ իրեք աղջիկ ունեմ: 60 ռուբլին ստացա, գնացի (Փ-անց Ս-ն տոտան էր), ասի. «Ինձ մի թոփ կտոր ես տալի՝ 60 մետր», ասեց. «Ա՛յ խոխա, կռիվը բերում ես ինձա՛նով ածես»: Ասեցի. «Դու գո՛րծակատար ես՝ դու ծա՛խում ես, ես առնում եմ»: 60 մետրանոց մի հատ չիթի թոփ առա՛, դրա՛ ուսիս, բայց գյուղի է՞ն ծերն ա խանութը: Էրկու կիլոմետր քայլեցի, էկա, հասա տուն՝ տո՛ւր թե՝ կտաս: [Սկեսուրը ասել է] «Խա իշու՞մ չես, գրասե՞նյակ ա մտալ, փո՞ղ ա ստացա՞լ, առևտու՛ր ա ըրա՞լ, էդ քանի՞ գլխանի ես» (գ. Տեղ, 09.10.2024 թ.):

Ավագ սերնդի կանայք շեշտում են, որ թեև գորգագործությունից ստացած վաստակը «քիչ գումար չէր», այնուամենայնիվ, երիտասարդ տարիքում նրանք անմիջականորեն ներգրավված չէին դրա տնօրինման գործում: Միայն ավագ սերնդի բացակայության պայմաններում կանայք սկսեցին ինքնուրույն տնօրինել այս եկամուտները՝ հնարավորություն ստանալով «գորգի փողով» ամուսնացնել իրենց դուստրերին, կրթություն տալ որդիներին և ապահովել ընտանիքի տնտեսական կարիքները:

Վաստակած գումարը տնօրինելու անազատությունից բացի, նրանց վրա տարածվում էին ավագների սահմանած՝ տեղաշարժի սահմանափակման կանոնները: Մյուս կողմից, գորգագործ կանայք գործում էին նաև պետության սահմանած պլանային ժամանակացույցի շրջանակում, ըստ որի, գորգի հանձնման վերջնաժամկետը յուրաքանչյուր ամսվա 28-ն էր: Այն դեպքերում, երբ գորգագործը կարողանում էր գորգն ավարտել ժամկետի մեջ, նրա համար բացվում էր հավելավճար ստանալու հնարավորություն, ինչը դառնում էր տնտեսական խթան՝ աշխատելու ավելի ինտենսիվ ռեժիմով: Հենց սա էր պատճառը, որ կանայք հաճախ դիմում էին միմյանց խնդրանքով. «Գորգս պլանի ա, կգա՞ս օգնես»: Սակայն համագործակցությունն ու փոխօգնությունը սահմանափակված էին կարևոր մասնագիտական չափորոշիչներով. ոչ բոլոր գորգագործները կարող էին աշխատել միասին: Հիմնական պայմանն այն էր, որ համագործակցող կանայք պետք է գործեին նույն արագությամբ, նույն որակով, նրանց լեզվով ասած՝ ունենային «նույն ձեռքը»: Հատկապես բարդ էր համարվում «Անահիտ» գորգ գործելը, որը պահանջում էր տեխնիկական վարպետություն և բացառիկ ուշադրություն մանրամասնություններին: Որպես սեփական արհեստավարժության վկայություն՝ վարպետ գորգագործները հաճախ շեշտում էին, որ իրենց փորձառության հիմնական ոլորտը «Անահիտ» գորգի արտադրությունն էր, ինչը մասնագիտական համայնքում բարձր գնահատականի չափանիշ էր: Սա էր պատճառը, որ «նույն ձեռքով» աշխատող կանայք նախընտրում էին համագործակցել կոնկրետ գորգագործների հետ, քանի որ աշխատանքից ստացված վարձատրությունը պետք է նաև հավասարաչափ բաժանեին իրար միջև: Տան և համայնքի ներսում գոյություն ունեցող սոցիալական վերահսկողության շրջանակում թույլատրված չէր կանանց այլոց տներում փոխօգնության գնալու համար ինքնուրույն որոշում կայացնելը: Հարսները պարտավոր էին ստանալ ավագ սերնդի՝ հատկապես սկեսրոջ համաձայնությունը, իսկ հաճախ էլ, ինչպես նշում են, ոչ թե իրենք, այլ ավագներն էին միմյանց դիմում, իրար հետ բանակցում՝ առաջարկելով որ մյուս ընտանիքի գորգագործ հարսը իրենց տուն գա օգնելու՝ սահմանված ժամկետի մեջ ավարտելու գորգը:

Կանանց «ցանկալի սուբյեկտների» կարգավիճակ սահմանելու և նրանց վարքագծի ուղղորդման ոչ ֆորմալ, սակայն գերիշխող իշխանությունը շարունակում էր մնալ համայնքային տիրույթում, ինչը հաջողությամբ օգտագործվում էր պետության կողմից: Չնայած գորգագործության միջոցով կուտակվող մշակութային կապիտալին, կանանց հմտություններն ու գիտելիքները չէին վերած-

վում սոցիալական կապիտալի՝ ո՛չ ավանդական համայնքի, ո՛չ էլ խորհրդային պետության ինստիտուցիոնալ դաշտերում, որտեղ նորմատիվ և ինստիտուցիոնալ սահմանափակումները խոչընդոտում էին մշակութային ռեսուրսների՝ ավելի լայն սոցիալական ճանաչման ու ազդեցության վերածելուն: Գորգարտադրության պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգամ պետական համակարգում կանանց ներգրավվածության և վարձատրվող աշխատանքի պայմաններում, գիտելիքի փոխանցման, որակի վերահսկման և կարգապահության հիմնարար մեխանիզմները, ինչպես նաև կանանց դերին վերագրվող նորմատիվ պահանջները շարունակում էին պահպանվել համայնքային վերահսկողության ներքո:

«Երբ նրան մեքենա վստահեցին». կոլեկտիվ արտադրությունը՝ գենդերային կարգերի ինստիտուցիոնալ և մշակութային վերարտադրության տարածք

1960-ականներին Իջևան քաղաքում Գորգագործական կոմբինատի հիմնադրումով նախաձեռնվում է արդյունաբերական արտադրության և սեռերի այս դաշտ ներգրավվածության նոր գործընթաց: Ըստ տեղացիների նկարագրության, մոտակա գյուղերից գրեթե երկու հազար կոլտնտեսական կանայք ներգրավվում են նոր ձևավորվող քաղաքային արդյունաբերական միջավայր:

Նոր իրականությունը չջնջեց սեռային դերաբաշխման խորքային կառուցվածքները: Թեև Գորգագործարանը շրջանային մամուլում ներկայացվում էր որպես սոցիալիստական հավասարության և սոցիալ-մշակութային վերափոխման հարթակ, աշխատանքի գենդերային բաժանումները վերարտադրվում էին նոր ձևերով: Արդյունաբերացման գործընթացում թել մանելը, ոլորելը, գորգ գործելը շարունակում էին վերագրվել բացառապես կանանց: Համայնքում այս ոլորտը կանանց վերագրելու շարունակականությունն ակնհայտ է դաշտային նյութերում. տեղաբնակ տղամարդկանցից մեկը, անդրադառնալով գործարանի աշխատակազմին, նշել է. «Ով պտի աշխատեր Կավրոյմ – կնանիք, գորգը կնգա գործ ա»: Այսպիսով, Գորգագործական կոմբինատը դառնում է սեռային կարգերի վերաձևման բարդ հարթակ. մի կողմից՝ կանայք արդեն ներգրավված էին գործարանային արտադրության մեջ, սակայն, մյուս կողմից, պետության ստեղծած տարածքում՝ գործարանում շարունակում էր գործել ըստ սեռի մասնագիտությունների «բացառման» և «առանձնացման» խորհրդային քաղաքականությունը (Walby 1990, 53–55; Lapidus 1993; Voronina, 1993, 99–100):

Պետությունը, սակայն, ակտիվ էր կանանց գործարան տեղափոխելու հարցում: Նախ, շրջանային մամուլը լցվեց գաղափարախոսական հրապարակումներով, որտեղ «նոր իրականությունը» ներկայացվեց որպես «նոր» կյանքի՝ սոցիալական շրջադարձի ու մշակութային հաղթանակի տված հնարավորություն (Շտկվում է դարերի վրիպակը 1963, 20; Գորգագործական կոմբինատը պետք է ոտքի կանգնեցնել 1965, 3): Իջևանի շրջանային թերթերում պետական ուղղորդող քաղաքականությունն այս տարածքը նկարագրվում էր որպես մասնագիտական կապիտալի հարուստ միջավայր, որտեղ «երեք ընտանիքներից երկուսում գոր-

գագործությամբ էին զբաղվում» (Կարապետյան 1970, 18–20): Պետական քարոզչությունը շեշտադրում էր, որ եթե նախորդ սերունդները գորգագործությունը ստիպված էին պատկերացնել որպես ավանդական, «դազգահի պարզ լեզվով» արհեստ, ապա «նոր» սերնդի կանայք, ըստ խորհրդային մամուլի, ներգրավվելով արդյունաբերության մեջ, այլևս ունեին «հնարավորություն կանգնել մեքենայի վրա» (Շտկվում է դարերի վրիպակը 1963, 21; Մխիթարյան 1980, 3):

Համայնքում պահպանվող դերերը վերաձևելու և կանանց՝ արդյունաբերական աշխատանքի մուտքը դյուրացնելու նպատակով, խորհրդային մամուլը սկսեց ակտիվորեն ներկայացնել արդյունաբերության մեջ աշխատող կնոջ կերպարը՝ որպես սոցիալական և արտադրական առաջընթացի խորհրդանիշ: 1960–1980-ական թթ. «Լենինյան ուղիով» թերթի Իջևանի շրջանային համարներում կանանց աշխատանքային նվաճումները ներկայացվում էին ոչ միայն որպես անհատական հաջողություն, այլև արտադրության առաջընթացի շարժիչ ուժ՝ մարմնավորելով խորհրդային կնոջ նոր գաղափարական կերպարը, որը միաժամանակ մերժում էր ավանդական սահմանափակումներն ու մարմնավորում սոցիալական առաջընթացի իդեալը: Սոցիալիստական աշխատանքում ներգրավված օրինակելի կնոջ մասին է Շամամ Սարատիկյանի կենսափորձի մասին պատմող հոդվածը: Նրա աշխատանքային կենսագրությունը ներկայացվում է ոչ միայն որպես անձնական պատմություն, այլ նաև որպես պետության կողմից ընձեռված հնարավորությունից ճիշտ օգտվելու ուսուցողական օրինակ: Ընթերցողը ուղղորդվում է գիտակցելու, որ օրինակելի կենսագրությունը սկսվում է այն պահից, երբ քաղաքացին գիտակցում է իր տեղն ու դերը սոցիալիստական հասարակության կառուցման գործում. «Եթե ինձ հարցնեին, թե որտեղից է սկսվում մարդու կենսագրությունը, ծննդյան օրի՞ց, աշխարհը ճանաչելու առաջին փորձերի՞ց, թե՞ երբ լրջորեն գիտակցում է իր տեղը ու ոտքը ամուր դնում կյանքի շեմին՝ ստեղծելով իր դիրքը հասարակության մեջ, ես կնախընտրեի վերջինը» (Մելքումյան 1980, 2):

Այս հատվածը վերածվել է խորհրդային գաղափարախոսության համար հիմնարար ուղերձի. կենսագրության իմաստը և արժեքը պայմանավորված է սոցիալիստական արտադրական գործընթացում մարդու մասնակցությամբ և անհատական ներդրմամբ: Հոդվածում Շամամի աշխատանքի մեկնարկը ներկայացվում է 1973 թվականը՝ միջնակարգ կրթությունը ստանալուց անմիջապես հետո, երբ նա «վախվորիկ քայլերով» դիմում է կոմբինատի տնօրենին՝ աշխատանքի ընդունվելու խնդրանքով: Նրա աշխատանքի ընդունվելն ու առաջին աշխատանքային հաջողությունները ներկայացվում են որպես յուրօրինակ սոցիալիստական ինքնահաստատում. «Երբ նրան մեքենա վստահեցին, նա լիովին համոզվեց, որ իր սիրած գործի համար երջանիկ հնարավորություն է ստեղծվել, ու աշխատեց լիարժեք օգտագործել այդ հնարավորությունը» (Մելքումյան 1980, 2):

Համայնքային կանխատեսված դիմադրությանը պետական քաղաքականությունը նախահարձակ ու նուրբ ռազմավարությամբ էր մոտեցել: Ապաստալինացման քաղաքականությունը հիմնարար փոփոխություն էր բերել նաև աշ-

խատանքի դաշտում. ինչպես ցույց է տալիս Դոնալդ Ֆիլտցերի վերլուծությունը, ստալինյան աշխատանքային օրենսդրության լուծարմամբ և հետագա բարեփոխումներով՝ գործնականում դադարեցվել էր բանվորների նկատմամբ կիրառվող պատժիչ քաղաքականությունը: Աշխատանքի դրդելու նախորդ մեխանիզմները չեղարկելով, խրուշչովյան քաղաքականության հիմնական խնդիրներից մեկն էր դարձել աշխատուժի կուտակումը և պահպանումը, քանի որ բանվորներին աշխատանքը փոխելու ավելի մեծ ազատություն էր տրվել, ինչը ստիպում էր գործարաններում ունենալ մշտական աշխատուժի ավելցուկ՝ արտադրական գործընթացը պահպանելու համար (Filtzer 1996, 11–12): Այս պարագայում աշխատողին գործարան ներգրավելու և պահելու խնդիրը հիմնականում տեղափոխվեց արտադրության կազմակերպիչների պատասխանատվության դաշտ: Գորգագործական կոմբինատի դեպքում արդյունաբերական աշխատանքի ուղղորդման և խրախուսման գործընթացը գյուղական համայնքներում իրականացավ նրբանկատ միջամտությամբ: Աշխատանքի կազմակերպիչները, կամ ինչպես տեղացիներն են նշում՝ «կադրեր հայթայթելու ագենտները» կամ «բանվորի ագենտը», վերադառնալով հայրենի գյուղեր, բանակցում էին ընտանիքի ավագ անդամների հետ՝ հանդես գալիս որպես երաշխավորներ կանանց համար՝ ներկայացնելով պետության առաջարկները: Կանանց անցումը արդյունաբերական կյանքի տեղի ունեցավ պետական զգուշավոր քաղաքականության՝ համայնքի ազդեցիկ միջնորդների ներգրավմամբ՝ «ներթափանցելով» ավանդական կառույցների մեջ, առանց ուղիղ ճնշման, այլ տեղային փոխհամաձայնության միջոցով:

Գործարանը, որ խորհրդային քարոզչության մեջ ներկայացվում էր որպես կնոջ սոցիալական առաջընթացի տարածք, իրականում դարձավ սեռային դերաբաժանման վերարտադրության նոր հարթակ: Սակայն կանայք գործարանի ներսում բախվեցին սեռով պայմանավորված մասնագիտական տարանջատման խորհրդային իրականության հետ: Չնայած գրանցած սոցիալական շարժունակությանը, խորհրդային «ազատագրման» դեպքը առավել ուղղված էր կանանց զբաղվածության աճին: Գորգագործական կոմբինատի դեպքում, 1960-ականներին գյուղական միջավայրում տասնութից երեսուն տարեկան կանայք անպատրաստ էին սոցիալական վերափոխումների մեկնարկին: Մասնագիտական ու տեխնիկական կրթության անհասանելիության պատճառով գործարանում հայտնված կանայք զբաղեցրին ընդամենը աշխատանքային բուրգի ստորին օղակները: Գործարանի գոյության ողջ ընթացքում տղամարդիկ գերակշռեցին արտադրության ղեկավար պաշտոններում, լաբորատորիաներում, հաշվապահական աշխատանքում և հատկապես ինժեներական ստորաբաժանումներում, իսկ ցածր օղակներ զբաղեցնող կանայք ստիպված էին բարձր ինտենսիվությամբ աշխատել՝ տղամարդկանց համարժեք վարձատրություն ստանալու համար:

Եզրակացություններ

Խորհրդային Հայաստանում գորգագործ կանայք գործել են երկակի ենթակայության դաշտում՝ միաժամանակ ենթարկվելով ավանդական համայնքի և

խորհրդային պետության ինստիտուցիոնալացված աշխատանքային վերահսկողությանը: Հանրային արտադրությունը, մարքսիստական, լենինյան տեսության մեջ և խորհրդային փորձում, ներկայացվում էր որպես կանանց տնտեսական ներգրավման և «ազատագրման» հռչակված հարթակ, իրականում գործեց երկակի տրամաբանությամբ. մի կողմից, այն հնարավորություններ ստեղծեց տնտեսական միջոցներ ձեռք բերելու համար և հանրային դաշտ մուտք գործելու, մյուս կողմից, պահպանեց և վերարտադրեց սեռային հիերարխիաներ, որոնք խորը ներդրված էին արտադրական հարաբերությունների մեջ: Կանանց «ազատագրման» գաղափարախոսական հռետորաբանության և իրական սոցիալական արդյունքների միջև կառուցվածքային հակասությունը ցույց է տալիս, որ խորհրդային «ազատագրումը» ոչ թե նպատակաուղղված էր սեռային անհավասարության արմատական վերացմանը, այլ, առաջին հերթին, ծառայում էր տնտեսական արդյունավետության ապահովմանը, զբաղվածության լիրաժեք կազմակերպմանը և գաղափարական վերահսկողության վերարտադրությանը:

Շնորհակալական

Դաշտային հետազոտությունը հնարավոր է դարձել Հարավային Կովկասի ամերիկյան հետազոտությունների ինստիտուտի (ARISC) դրամաշնորհային աջակցության և Հայաստանի պատմության թանգարանի կողմից գործուղման շնորհիվ:

Գրականություն/References/Литература

1. Աբելյան Պ. 1924, Գեղջկուհին յեվ կոոպերացիան Հայաստանում, Հայաստանի աշխատավորուհի, N 1, Յերեվան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հրատ., 27–28:
   Abelyan P. 1924, The Peasant Woman and the Cooperative in Armenia, Hayastani Ashkhatavoruhi [The Woman Worker of Armenia], vol. 1, Yerevan, Publishing House of the Central Committee of the Communist Party of Armenia, 27–28 (in Armenian).
2. Ամեն մի գյուղացի իր ապրուստի համար 1924, Հայաստանի աշխատավորուհի, N 1, Յերեվան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հրատ., 35-36:
   Every peasant, for their livelihood 1924, Hayastani Ashkhatavoruhi [The Woman Worker of Armenia], vol. 1, Yerevan, Publishing House of the Central Committee of the Communist Party of Armenia, 35-36 (in Armenian).
3. Ավանեսյան Լ. 2011, Գորգագործությունը խորհրդային և հետխորհրդային Հայաստանի շրջաններում և Արցախում (ըստ 2008 թ. դաշտային նյութի), Հայոց գորգագործական մշակույթը. Հանրապետական առաջին գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ մշակույթի նախարարություն, 17–25:
   Avanesyan L. 2011, Carpet Weaving in the Soviet and Post-Soviet Regions of Armenia and Artsakh (Based on 2008 Field Materials), Armenian Carpet Weaving Culture, Proceedings of the First Republican Conference, Yerevan, Ministry of Culture of the Republic of Armenia, 17–25 (in Armenian).

4. Արամյան Վ. 1981, Հայաստանի թեթև արդյունաբերությունը, Երևան, Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերության նախարարություն:
Aramyan V. 1981, Light Industry of Armenia, Yerevan, Ministry of Light Industry of the Armenian SSR.

5. Գորգագործական կոմբինատը պետք է ոտքի կանգնեցնել (ՀԿՊ Իջևանի շրջկոմի բյուրոյում) 1965, Լենինյան ուղիով, N 25, Իջևան, Օրգան ՀԿԵ Իջևանի շրջանային կոմիտե, 3:
The Carpet-Weaving Combine Must Be Restored (In the Bureau of the Ijevan District Committee of the Communist Party of Armenia) 1965, Leninian Ughiov [On the Leninist Path], vol. 25, Ijevan, Organ of the Ijevan District Committee of the Communist Party of Armenia, 3 (in Armenian).

6. Գրիգորյան Ք. 1972, Նրա մեկ օրը, Հայաստանի աշխատավորուհի, N 4, Երևան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հրատ., 20-21:
Grigoryan K. 1972, Her One Day, Hayastani Ashkhatavoruhi [The Woman Worker of Armenia], vol. 4, Yerevan, Publishing House of the Central Committee of the Communist Party of Armenia, 20–21 (in Armenian).

7. Դարյան Վ. 1970, Հայաստանի թեթև արդյունաբերությունը 50 տարում, Երևան, Հայկական ՍՍՀ «Գիտելիք» ընկերություն:
Daryan V. 1970, Fifty Years of Light Industry in Armenia, Yerevan, Armenian SSR "Giteliq" society (in Armenian).

8. Թեմուրճյան Վ. 1955, Գորգագործությունը Հայաստանում: Պատմա-ազգագրական ուսումնասիրություն, Երևան, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիա, Պատմության ինստիտուտ:
Temurjyan V. 1955, Carpet Weaving in Armenia: A Historical and Ethnographic Study, Yerevan, Institute of History, Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).

9. Լալայան Ե. 1903, Բորչալուի Գաւառ, հ. X, Թիֆլիզ, տպ. Մ. Մարտիրոսեանցի:
Lalayan Y. 1903, The Borchalu District, vol. X, Tiflis, Printing House of K. Martiroseants (in Armenian).

10. Լիսիցյան Ս. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտ, Հայաստանի պատմության պետական թանգարան:
Lisitsyan S. 1969, The Armenians of Zangezur, Yerevan, Institute of Archaeology and Ethnography of the Armenian SSR Academy of Sciences, History Museum of Armenia (in Armenian).

11. Կարապետյան Ռ. 1970, Զեկույց պատգամի հավատարմության, Հայաստանի աշխատավորուհի, N 18, Երևան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հրատ., 18–20:
Karapetyan R. 1970, Report on Loyalty to the Mandate, Hayastani Ashkhatavoruhi [The Woman Worker of Armenia], vol. 18, Yerevan, Publishing House of the Central Committee of the Communist Party of Armenia, 18–20 (in Armenian).

12. Հակոբջանյան Լ. 1970, Հյուսվում են գորգերը գունագեղ, Հայաստանի աշխատավորուհի, N 12, Երևան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հրատ., 25–27:

Hakobjanyan L. 1970, The Colorful Carpets are Being Woven, Hayastani Ashkhatavoruhi [The Woman Worker of Armenia], vol. 12, Yerevan, Central Committee of the Communist Party of Armenia Publishing, 25–27 (in Armenian).

13. Հակոբյան Մ. Կոշկակարյան Է. 1982, Եկեք մեզ մոտ սովորելու և աշխատելու, Երևան, ՀՍՍՀ Թեթև արդյունաբերության նախարարություն:
Hakobyan M., Koshkakaryan E. 1982, Come to Learn and Work with Us, Yerevan, Ministry of Light Industry of the Armenian SSR.

14. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ Լոռու և Տավուշի մարզային մասնաճյուղ), ֆոնդ՝ Տեքստիլ և թեթև արդյունաբերության մինիստրության «Հայգորգ» Կիրովականի ֆիլիալ, ֆ. 38, ց. 1, գ. 5:
Lori and Tavush Regional Branch of National Archives of Armenia, Collection: "Haygorg" Kirovakan Branch Of The Ministry of Textile and Light Industry, collection 38, inventory 1, file 5 (in Armenian).

15. Հարությունյան Վ. 1967, Արդյունաբերության քայլերը, Հայաստանի աշխատավորուհի, N 6, Երևան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հրատ., 6–7:
Harutyunyan V. 1967, Steps of Industry, Hayastani Ashkhatavoruhi [The Woman Worker of Armenia], vol. 6, Yerevan, Publishing House of the Central Committee of the Communist Party of Armenia, 6–7 (in Armenian).

16. Ղուկասյան Վ. 1965, Թելերի երգը, Հայաստանի աշխատավորուհի, հ. 3, Յերեվան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հրատ., 8–9:
Ghukasyan V. 1965, The Song of Threads, Hayastani Ashkhatavoruhi [The Woman Worker of Armenia], vol. 3, Yerevan, Publishing House of the Central Committee of the Communist Party of Armenia, 8–9 (in Armenian).

17. Մարության Հ. 2021, Արհեստագործական որոշ ավանդույթների վերափոխումը Տավուշում (ըստ Իջևան և Դիլիջան քաղաքների նյութերի), հ. 4, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 75–84:
Marutyan H. 2021, Transformation of Certain Craft Traditions in Tavush (Based on Materials from the Towns of Ijevan and Dilijan), vol. 4, Works of the Institute of Archaeology and Ethnography, 75–84 (in Armenian).

18. Մելքումյան Թ. 1980, Մեր համեստ Շամամը, Լենինյան ուղիով, հ. 30, Իջևան, Օրգան ՀԿԵ Իջևանի շրջանային կոմիտե, 2:
Melkumyan T. 1980, Our Modest Shamam, Leninian Ughiov [On the Leninist Path], vol. 30, Ijevan, Organ of the Ijevan District Committee of the Communist Party of Armenia, 2 (in Armenian).

19. Մխիթարյան Ս. 1980, Գույների սիմֆոնիան, Լենինյան ուղիով, N 68, Իջևան, Օրգան ՀԿԵ Իջևանի շրջանային կոմիտե, 3:
Mkhitaryan S. 1980, Symphony of Colors, Leninyan Ughiov [On the Leninist Path], vol. 68, Ijevan, Organ of the Communist Party of Armenia, 3 (in Armenian).

20. Պողոսյան Ա., Պողոսյան Լ. 2021, Արհեստները Գեղարքունիքում 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին (ըստ պատմազգագրական նյութերի), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, հ. 2, 220–227:

Poghosyan A., Poghosyan L. 2021, Crafts in Gegharkunik at the End of the 19th Century and the Beginning of the 20th Century (Based on Ethnographic Materials), Shirak Center for Armenian Studies, Armenian Academy of Sciences, vol. 2, 220–227 (in Armenian).

21. Սահակյան Կ. 1968, Թեթև արդյունաբերության կադրերի պատրաստման դարբնոցները, Երևան, ՀՍՍՀ Մինիստրների սովետի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության պետական կոմիտե:
Sahakyan K. 1968, Workshops for Training Personnel in Light Industry, Yerevan, State Committee of Vocational and Technical Education of the Council of Ministers of the Armenian SSR.

22. Վարդումյան Դ., Կարապետյան Է. 1963, Հայաստանի կոլտնտեսական ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, ՍՍՌ ԳԱ հրատ.:
Vardumyan D., Karapetyan E. 1963, The Collective Farm Family and Family Life in Armenia, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).

23. Շտկվում է դարերի վրիպակը 1963, Հայաստանի աշխատավորուհի, N 6, Յերեվան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի հրատ., 20–21:
Correcting the Centuries-Old Mistake 1963, Hayastani Ashkhatavoruhi [The Woman Worker of Armenia], vol. 6, Yerevan, Central Committee of the Communist Party of Armenia Publishing, 20–21 (in Armenian).

24. Boettke P. 2017, A Legacy of Lies and Lost Souls: The Russian Revolution at One Hundred Years, The Independent Review, vol. 22, N 2, 191–197.

25. Buckley M. 1981, Women in the Soviet Union, Feminist Review, vol. 8, N 1, 79–106.

26. Claro M., Kremer R. 2015, Interpreting the world or changing it? The "woman question" and the "sexual question" in Soviet social sciences, vol. 41, Clio. Women, Gender, History, 41–64.

27. Filtzer D. 1996, Labor Discipline, the Use of Work Time, and the Decline of the Soviet System, International Labor and Working-Class History, N 50, Press, 9–28.

28. Fitzpatrick S. 1999, Everyday Stalinism: Ordinary Life in Extraordinary Times. Soviet Russia in the 1930s, Oxford, Oxford University Press.

29. Lapidus G. 1993, Gender and Restructuring: The Impact of Perestroika and its Aftermath on Soviet Women, Maghadam V. (ed.), Democratic Reform and the Position of Women in Transitional Economies, New York, Oxford University Press, 137–161.

30. Molyneux M. 1991, The 'Women Question' in the Age of Perestroika, Agenda: Empowering Women for Gender Equity, vol. 7, N 10, 89–108.

31. Nash E. 1970, The Status of Women in the U.S.S.R., Monthly Labor Review, vol. 93, N 6, 39–44.

32. Schuster A. 1971, Women's Role in the Soviet Union: Ideology and Reality, The Russian Review, vol. 30, N 3, 260–267.

33. Schwartz J. 1979, Women under Socialism: Role Definitions of Soviet Women, Social Forces, vol. 58, N 1, 67–88.

34. Voronina O. 1993, Soviet Patriarchy: Past and Present, Gender and History, vol. 8, 97–112.

35. Walby S. 1990, Theorizing Patriarchy, Oxford, Basil Blackwell.